

2. Իտալիոյ Լիվոռնոյ քաղաքին կաթողիկեայ Հայոց Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ Դիւանը 73 կտոր վաւերագիր գտնուեցաւ Սարգիս Արքեպ.ի վերաբերեալ, զոր եկեղեցւոյն Գերլ. Մեծաւորն՝ Գր. Ծ. Վ. Պահապանեան ամենայն ազնուութեամբ իմ տրամադրութեանս տակ դրաւ, եւ Սարգսի գերեզմանի մասին պէտք եղած տեղեկութիւնները տուաւ: Գործոյս մէջ կը նշանակեմ՝ «Դիւ. Լիվ. »:

3. Վենետիկի Մխիթարեան Յարգոյ Միաբանութեան օգնական Մատենադարանապետն Գեր. Հ. Մկրտիչ Պոստուրեան, ազնիւ միջնորդութեամբ Գեր. Հ. Աթանաս Վ. Տիրոյեանի, հաճեցաւ Սարգսի առ Մխիթար Աբբայ գրած ինը նամակներու օրինակը ղըկել, եւ անոր հրատարակութիւններէն հինգին վըայ տեղեկութիւններ տալ ըստ խնդրանացս: Գործոյս մէջ կը նշանակուի՝ «Դիւ. Մխիթ. Վենետ.»:

Այստեղ իմ մասնաւոր շնորհակալութիւններս կը յայտնեմ վերոյիշեալ Գեր. Անձնաւորութեանց, որոնք ամենայն հոգածութեամբ օգնեցին ինծի եւ գործոյս կատարելութեան գլխաւոր սատարներն եղան:

Տպագիրներէն գործածած, համեմատած եւ ուղղագրած եմ՝

1. Չափէն Հ. Մ., Պատմ. Հայոց, Գ. Հտր., Վենետ. 1786: Գործոյս մէջ նշանակուած՝ «Չամէ.»: